

դէտները բաւականաչափ հայերէն չգիտեն, որ հետեւեն հայատառ գիտական դրականութեան: Այս ցաւալի է, ոչ միայն նրա համար, որ մի Հ. Ա. Այտրեան կամ մի Հ. Յ. Տաշեան ամենքին անխտիր կարող են բան սովորեցնել առնուազն հայ լեզուի եւ դրականութեան վերաբերեալ, այլ մանաւանդ ցաւալի է նրա համար, որ հայերէն չկարդալով՝ նրանք կատարում են փորձեր, որ չէին կատարի, եթէ ծանօթ լինէին հայ գիտական դրականութեան:

Եթէ, օրինակ, Լ. Գրէյ ծանօթ լինէր Հ. Յ. Գաթրճեանի փոքրիկ, բայց մեծարժէք դրքոյկին (Պատմ. մատենագր. հայոց, Վիեննա, 1851) նա կ'իմանար, որ իրանից 75 տարի առաջ ուրիշներն արդէն փորձել են նոյն ձեւով դանել Գողթան երգերի չափը, ինչ ձեւով ինքն է դանում այսօր: Այնտեղ նա կարող էր կարդալ (էջ 31-32). «Շատերն երբեմն ասանկ եւ երբեմն անանկ տաղական արուեստ մը նշմարել ուղեցին (խօսքը Գողթան երգերի մասին է): Բիրտ մտածում մը կ'ըլլար ասոնց վրայ (արարացոց) նոյնաձեւ վերջերն (յանգերը) փնտռել՝ կամ ամբողջ վանկերով եւ կամ պարզապէս ձայնաւորներու նոյնութեամբ, կամ թէ Գերմանացոց Հիլդերբանդեան հին երգին մէջ դիտուած՝ տողի մը զանազան անդամոց սկզբնական վանկերուն նոյնաձայնութիւնը: Բայց իրօք ուրիշ փորձերու ձեռք զարնուեալ երբեմն վանկերու գրեթէ (ընդգծումը իրենն է) նոյնաթիւ համբանքովն յափշտակուելով ու անոնց համեմատ տողերու կտրաստելով, եւ երբեմն այս դրութեամբ ալ չյազած՝ Յունական կամ Հռոմէական չափերու դիմեցին, այսինքն երկար ու կարճ վանկերու համեմատութիւններով լուծում մը ուղեցին զբանել:

Արդ՝ Լ. Գրէյ այն մարդկանցից մէկն է, որ մեր հին երգերի վանկերի տեղ-տեղ պատահող գրեթէ նոյնաթիւ համբանքով յափշտակուած եւ «նրանց համեմատ տողեր կտրատելով», կարծել է թէ «ղիւրապէս» կարող է վերականգնել մեր հեթանոս երգերի տաղաչափութիւնը: Մենք տեսանք այն աղճատումները, որ նա կատարած է բառերի եւ վանկերի վերայ: Ահաասիկ երկու նմուշ նրա «կտրատած» տողերից.

Եւ հանեալ զոսկէօղ
Շիկափոկ պարանն եւ
Անցեալ որպէս զարծուի
Սրաթեւ ընդ գետն.

Ահա միւսը.

Մինըչ դու գնացեր եւ
Ջերկիրս ամենայն տարար
Ընդ քեզ աւերակացրս
Ես որպէս թագաւորեմ:

Սա ինձ յիշեցնում է Յ. Պարոնեանի անմոռանալի «բանաստեղծութիւնը».

Թ՛ապակենտրոնացակա
նութիւն երբեք ըլլայի...
* * *

Մի վերջին դիտողութիւն: Լ. Գրէյ իր հետազոտութեան մէջ հայ երգերի բնագիրը տառադարձելով՝ մօտը դրած է նրանց Ֆրանսերէն թարգմանութիւնը: Այնտեղ օրինակ կարդում ենք.—

Ընդ եղեգան փող ծուխ ելանէր
Ընդ եղեգան փող բոց ելանէր
Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր,

Որ նա թարգմանում է այսպէս՝
Du tuyau du jonc func fume'e sortit
Du tuyau du jonc flamme sortit
Et de la flamme un jeune homme sauta.

Թէ ինչու հայերէն անցեալ անկատարները դարձած են Ֆրանսերէն կատարեալ կամ հայի վազելը Ֆրանսերէն դարձած է ցատկել — դժուար է ասել. չգիտեմ անուշադրութեան վերագրեմ թէ անբաւարար հայագիտութեան: Ինչ եւ է. ամփոփենք: Լ. Գրէյ Գողթան երգերի ոչ բոլոր հատուածներն ունի նկատի: Տաղաչափական խնդիրներ քննելուց առաջ նա չի մտածած վերականգնել երգերի բնագիրները, ինչ որ առաջին պայմանն է հետազոտութեան: Իր յապաւումները, յաւելումները եւ տեղափոխութիւնները անհիմն ու անտեղի աշխատանք են միայն: Իր ըքաղրութիւնները իր իսկ ընդունած սկզբունքների անհետեւողական դորձադրութիւն են: Նա որոնում ու վերակազմում է զուգաթիւ վանկեր, անտես անելով երգերի բանաստեղծական պատկերները, նրանց յորինուածքը եւ հայ լեզուի ոգին: Իր